

Գ. Մ. ԼԻՏՎԻՆՈՎ

ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁԸ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1938

WASHER



9:327(47), 1938

Կ Մ. Մ. ԼԻՏԱԿԻՆՈՎ

# ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՋԸ

18766  
A II  
227  
55




Պ Ե Տ Լ Ր Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1938

**М. М. ЛИТВИНОВ**  
**К СОВРЕМЕННОМУ**  
**МЕЖДУНАРОДНОМУ ПОЛОЖЕНИЮ**

**Армизд—Издательство полит. литературы**  
**Ереван, 1938**





Միջազգային հարաբերութիւններէ հասուկ ուսումնասիրութիւնը չի պահանջուում, բովանդակն և ամեն որ թերթեր կարգալ տեսնելու և հասկանալու համար ներկայիս միջազգային դրութիւնն տաղնապալի և շարադուշակ ընտելթը<sup>1</sup>։ Մենք սովորենք տարրերութիւնը դնել պատերազմական և խաղաղ ժամանակի միջև, թեպետև ինքներս մեզ հաշիվ ենք տալիս այն մասին, վոր կապիտալիստական կարգի պահպանման ժամանակ յերկարատև, հաստատուև խաղաղութիւնն անհնարին և։ Այլիկ նիշտ կլինիր վորպէս խաղաղ ժամանակ համարել յերկու պատերազմներէ միջև ընկնող առավել կամ պակաս տևական ժամանակամիջոցը, այլ կերպ առած՝ զինադադարը։ Ինչ արդին մեկ տեղամ վիճակվել և Ազգերի լիգայում ունեցած իմ յերութեամ նշել, վոր յուրաքանչյուր պատերազմ վորոշ ժամանակամիջոցից հետո անխուսափելիորեն ծնոււմ և նոր պատերազմ և վոր կապիտալիստական պետութիւններէ միջև կնքված հաշտութիւնն յուրաքանչյուր պայմանագիր իր մեջ կրոււմ և նոր պատերազմի սաղմեր։ Այժմ կարելի չե լիակատար հիմունքով խոսել այն մասին, վոր համաշխարհային իմպերիալիստական պատերազմը (1914—1918 թ. թ.) չվերջացավ Ալեքսան, Սեն-Ժերմենի և այն ժամանակ կնքված այլ պայմանագրերով, վոր այդ պատերազմը շարունակվում և զինադադարի պայմաններում այլ միջոցներով, սակայն մասնակիցների կազմը մի քիչ փոխվել և։ Նույնիսկ կարելի չե տեսլ, վոր Իսպանիայում և Ջինաուտանում տեղի ունեցող պատերազմը հանդիսանում և համաշխարհային վերջին պատերազմի արձագանքը։

Վարպետի այդ գրութիւնը պարզարաննւմ, յնա թույլ կամ ինչ մի հայտք նետելու վող-հետու անցյալի վրաս Համաշխարհային պատերազմը հիմնականում ծաղեց հին իմպերիալիստա-

<sup>1</sup> Կենինդրոզ ցաղաքի Պետրոգրադյան ընտրական սկրուպի ընտրողների նախընտրական ժողովում 1938 թ. հունիսի 23-ին արտասանած ճառից։

կան պետութիւնները—մի կողմից՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի, և մյուս կողմից՝ Գերմանիայի միջև այն ժամանակ դոյութիւնն ունեցող անասողոնիզմի պատճառով: Այն հակաութիւնները, վարունք գոյութիւնն ունեցին, մի կողմից՝ ցարական Ռուսաստանի, և մյուս կողմից՝ Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի միջև, յերկրորդական դեր կէին խաղում և ինքնընտրանքան չէին վորոշում պատերազմի վոչ չափերը, վոչ էլ նրա հիմնական նպատակները: Իմպերիալիստական առարկող վոտք գրած նոր յեկվորը, հենց նոր միավորված Գերմանիան արդյունարեբական պրոգրեսի ուղիով արագ կերպով քայլեց առաջ և ինչ-վոր մի 30—40 տարվա ընթացքում համաշխարհային շահանքում դարձալ ամենամասնադաւոր մրցակիցը նույնիակ այնպիսի հզոր ինդուստրիալ յերկրների համար, ինչպիսիք են Անգլիան և Ամերիկան: Իր արդյունարեբութիւնը դարգացնելու հետ միասին Գերմանիային հաջողից ստեղծել ուժեղ, տեխնիկապետ հարուստ սպասադիմված բանակ և նույնիակ ծովային նավատորմ, վորը մրցակցութիւն հավակնութիւն ուներ Մեծ Բրիտանիայի այն ժամանակվա ամենազորեղ նաւատորմի հետ: Հենվելով իր բանակի, նավատորմի և արդյունարեբութիւն վրա և զործի դնելով ղեկմանադիտութիւն այն ազգետիվ մեթոդները, վոր նրա ներկայիս կառավարողներն այժմ դարգացրել— կատարելագործութիւնն են հասցրել, Գերմանիան յեկրողական ամբողջ կոնտինենտի վրա իշխելու պահանջ էր ներկայացնում: Նա դծեց այսպետ կոչված միջին Յեկրողայի սիսեման, այսինքն՝ կենտրոնական Յեկրողայում բոլոր պետութիւններին այս կամ այն ձևով իրեն յենթարկելու սիսեման և Բալկանների միջոցով ղեպի Մերձավոր Արևելք էր ձգտում: Զգոհանալով Աֆրիկայում և Ծագող ովկիանոսում «խաղաղ հանապարհով» ձեռք բերված գաղութներով, նա սկսեց վոտնձգութիւններ անել Մարոկկոյի, Ալժիրի և Ֆրանսիայի այլ տիրապետութիւնների դեմ և նախանձտ, տենչալի հայացքներ գցել նույնիակ ղեպի բրիտանական տիրապետութիւնների և գաղութների կողմը:

Գերմանիայի այն ժամանակվա կառավարողները, պարան Հիտլերի նախորդները, իրենց ազգետիվ մտադրութիւնները չկարողացան ջողարկել կոմունիզմի դեմ մղվող պայքարի լողունդներով: Նույնպետ և այն ժամանակ վերջնական ձևով գոյութիւն չաւներ ներկայիս ոտաոյական թեորիան, վորն ընդունում և միայն դերմանական ցեղի պատմական գոյութիւն իրավունքը, ոտկայն այս թեորիայի սաղմերն արդեն կային: Այդ թեորիան



հայաստան կը աշակերտեցին և կը ղեկավարեցին մեզ, այսինքն  
Գերմանիայի՝ բոլոր գերմանական ցեղերին միավորելու ձգտման  
մեջ և Յեփրոզայում գերիշխանութուն ձեռք բերելու ձգտման  
մեջ:

Գերմանական այդ ազդեցիկներն հակադրելու համար, դո-  
յություն ունեցող յեփրոզական ու դադութային կարգը պարա-  
պանելու համար հենց սակոփեց Մեծ Բրիտանիայի ու Յրան-  
սիայի ղեկավարութեամբ 25 պետութեան ներքեց ըստկացած այն  
հոսքը կառուցիկան, վորի հետ Գերմանիային վիճակիկեց ընդհար-  
վել համաշխարհային պատերազմի ժամանակ: Այն նպատակին,  
վոր գրեթէ կյին իրենց աստ՞ Մեծ Բրիտանիան ու Յրանսիան և  
հետադայում նրանց հարած ԱՄՆ, նրանք հասան Գերմանիան,  
կարծես թե, պատերազմը տանուլ տվեց և իր վոչ բազմաթիվ  
դաշնակիցներին հետ միասին ստիպված յեղավ ստորադրել Վեր-  
սալի, Մեն-ֆերմենի, Տրիանոնի և հաշտութեան այլ պայմանա-  
դրեր, վորոնք Յեփրոզայում նոր կարգ սահմանելով, նոր ձևով  
վերարտադանելով գազութները, պետք և Գերմանիային զրկելին  
այդ կարգի խախտման դեմ նոր վտանգութուն տնելու ամեն  
մի հնարավորութեանից: Համաձայն Վերսալի պայմանագրի՝  
Գերմանիայի սահմանն նախատրմը վոչնչացվեց և նոր նա-  
խատրմի կատարման իրավունքը սահմանափակված եր իրտ  
նեղ սահմաններով: Գերմանիան պետք և բախարարվել 100 հա-  
զար մարդուց ըստկացած վարձու բանակով՝ տոանց տանկերի,  
ձանը հրետանու ու սահմանական ավիացիայի և զրկված եր պար-  
տագիր ղինապարտութուն մոցնելու իրավունքից: Հսկասի  
մարդը հայտարարվեց գեմիլիտարիզացիայի յննթարկված՝ այ-  
սինքն՝ Գերմանիան պարտավորվեց, վոր այնտեղ դորքեր չպահի  
և չկատարի վոչ մի սահմանական ամբռութուն: Այտարո-ձունգա-  
րիան միանգամայն անգամատվեց. նրա մի մասից կազմվեց  
Ձեխտլովակյան պետութունը, իսկ նրա մյուս մասերն ան-  
ցան հարկաններին—Լեհաստանին, Ռումիլիային, Հարավար-  
վիային և Իտալիային: Վախենալով, վոր Գերմանիան կցանկա-  
նա իրեն միացնել Ավստրիայի գերմանական մասը, Վերսալի  
պայմանագրի հեղինակները հատուկ հոդվածով խիտ և խիտ  
տըղելեցին այդ ըանը Գերմանիային: Գերմանիայից, իհարկե,  
վերցրին նրա բոլոր գազութները, վորոնք բաժանեցին Մեծ  
Բրիտանիայի, Յրանսիայի և Շապոնիայի միջև Մեծ տերու-  
թյուններին ասզնապ պատճառող գերմանական գերիշխանու-  
թեան մզավանքը պետք և կարծես թե ընդմիշտ չքանար:

Այս փաստերն այժմ ստիպոված ենք հիշել, վորովհետև նրանք վերջին տարիներէ ընթացքում նորից անցան մեր աս-  
ջեից, բայց հակառակ կարգով, այսինքն՝ լիկվիդացիայի կար-  
գով Մեր աչքի առաջ ցանդվում եւ ամբողջ այն կծիկը, վորը  
20 տարի սրանից առաջ կծկել էին համաշխարհային պատե-  
րագմում հաղթանակած թերկրները: Գերմանիային արդեն հա-  
ջողից առտնց վարեւ մի կրակոցի, տասնց վորեւ համաձայնու-  
թյան գալու Վերսալի եւ այլ պայմանադրերի հեղինակներէ հետ՝  
Չինի (վոչնչացնել) համարյա այն բոլորը, հանուն վորի արեւ-  
մասայնվորակիան տերությանները մղեցին համաշխարհային  
պատերազմը: Գերմանիան նորից իր մտա անցկացրեց ընդհա-  
նուր գինապարտություն, սակզմեց, հաշվի շաճեկով վոչ մի  
սահման ու արգելում, սպառադինոված տանկերով ու հրետանիներ-  
ով հզոր բանակ, վորն իր՝ թվով գերակշռում եւ բոլոր իր հա-  
րեաններին՝ առանձին վերցրած: Նա ունի այժմ ավելի ուժեղ  
սազմա-որային նավատորմ, քան արեւմտայնվորակիան տերու-  
թյանները: Նա վերանորոգել եւ սազմական նավատորմը, վորը,  
հիշա եւ, գեղեւ չի հատել նրա նախապատերազմյան նավատորմի  
չափերին, սակայն այդ միայն այն պատճառով, վոր նավատոր-  
մի կառուցումը պահանջում եւ շատ ժամանակ եւ փող: Գերմա-  
նիան ծովային նավատորմ եւ կառուցում եւ կկառուցի այնքան,  
վորքան վոր նա հնարավորություն ունի Վերսալի պայմանա-  
գրով գեթիխտարիզացիայի յենթարկված Հանսաի զոնայում Գեր-  
մանիան կառուցել եւ զգալի չափով սազմական մարություններ  
եւ այնտեղ պահում եւ մեծ բանակներ, վորոնք սպառնում են նրա  
արեւմայան հարեաններին: Հակառակ Վերսալի պայմանադրի վո-  
րոշման, Գերմանիան աննեքտիայի յենթարկեց (միացրեց) Ավս-  
տրիան, ստանալով այնպիսի հարուստ նահանգ, վորը բոլոր տե-  
սակեաներից հավելուրդով փոխհատուցում եւ համաշխարհային  
պատերազմում նրա կողմից կորցրած նահանգների փոխարեն,  
վորոնց վերադարձնելուց, ի միջի այլոց, նա նուրազեւ չի հրա-  
ժարվել: Գերմանիան այժմ սպառնում եւ Չեխոսլովակիային,  
վորը համաշխարհային պատերազմում դաշնակիցների տարած  
հաղթանակի հետեանցով եւ ստեղծված: Ավստրիայի աննեքտիան,  
ինչպեւ եւ Չեխոսլովակիային տիրելու փորձերը, կապված եւ այն  
միջին գերմանական Յեկրուպայի ստեղծման պլանի իրականաց-  
ման հետ, վորի մասին յերազում էին գերմանական իմպերիա-  
լիստաները դեղեւ համաշխարհային պատերազմից առաջ: Զնայած  
հում նյութերի բազաների պակասության, գերմանական արդյու-

նարեբությունը նորից հաջողութեամբ մըցում և արևմտախելոս-  
պական յերկրներ և Հյուսիսային Ամերիկայի արտադրութեան  
հետ, տիրանալով վոչ միայն Յեվրոպայի, այլև Մերձավոր  
Արևելքի, ինչպես նաև կենտրոնա— և հարավ-ամերիկյան հան-  
րատեութեաններ և արևմտադուին շուկաներին: Այլ նույն ջու-  
րը, նույն ջրադաշտը Համադիարհային պատերազմում Գերմանիայի  
ուսնեցած հակառակորդներ և առջև նորից հայտնվեց Գերմանիայի  
ազգայական և արդյունաբերական հեղեմոնիայի (ախրապետու-  
թեան) մղմամբ, ներշնչելով նրանց այնպիսի սարսափ ու  
զոռ, ինչպիսին նրանք յերբեք չէին զգացել մինչև այդ պատե-  
րազմը: Արևմտյան տերութեաններ ամբողջ դիվանագիտու-  
թեանը վերջին հինգ աստուած հանգում և այն բանին, վորպեսզի  
խուսափեն Գերմանիայի հարձակողական գործողութեաններին  
վարև կերպ հակադիպուց, կատարեն նրա պահանջները և նույն-  
իսկ քամահուռեքները: Արևմտյան տերութեաններ ամբողջ  
դիվանագիտական համակիված և Գերմանիայի թեկուզ ամենափոքր  
խկ անբավականութեանն ու անհավանութեանն առաջացնե-  
լու յերկրադավ:

Չգիտազրելու այդ տակտիկան, բնականաբար, խրախուսում  
և Գերմանիային հեզազա հարձակման և նրա ձգտումների ուժե-  
ղացման՝ ըստ հնարավորին ավելի արագորեն ևևս նվաճելու այն  
տերիտորիաները, վորոնք նրան վիճակվել էին դիջել հոգուս  
այլ պետութեաններ և վոչ մի կասկածի չենթակա չէ, վոր Գեր-  
մանիան վաղ թե ուշ մտտ ապագայում գործնականորեն կանցնի  
այն բանին, վորպեսզի վերականգնի իր մինչպատերազմյան  
սահմանները, իսկ ինչ վերաբերում և կորցրած դադութեանին,  
ապա նա արդեն այժմ ամեն տեսակի ձևական պատրվակներ  
տակ սպաննազին պահանջում և նրանց ամենաարագ վերադարձ-  
նելը: Սակայն բանն այժմ վոչ միայն միջազգային կարգի վե-  
րականգնումն և, վորը ղոյութեանն ունեց Յեվրոպայում մինչև  
դատերազմը, այլև բանը նախկին շղաչակիրներին— դեռ մինչև  
Համաշխարհային պատերազմը նրանց պատկանած— նրանց համար  
միանգամայն ուժեղ և կենսական դիրքերի նվաճումն և: Բավա-  
կան և հիշել Գերմանիայի՝ Իտալիայի հետ մեկտեղ կատարված  
Իտալիայի զգալի մասի և նրան պատկանող կղզիների, նույն-  
պես և Իտալիական Մարտիկոյի սկիզբապայի մասին:

Այս հանդամանքի նշանակութեանը զմահատելու համար  
անհրաժեշտ և նկատի ունենալ, վոր վերջին տառնամյակների  
քնթացքում Անդլիան ոգտվում էր Իտալիայի արտաքին քա-

դաքահանութեան վրա գործած հակայական տնքածանելի ազդեցութեամբ նա այնտեղ ունի խաղաղ տնտեսական շահեր և իրաւ զգալի չափով կապիտալ ներդրումներ: Բացի գրանից, Իսպանիայի հարավում գտնվում է Չիբրալտարյան ամրացը—Մեծ Բրիտանիայի կարևորագույն սարսաղակազմական գլխաբնակարանը, վարի ողջութեամբ նա իր հակադրութեան տակ և պահում մուսուլմանական ուղիներու զեպի Միջերկրական ծովը և բնդհակառակը: Իսպանական նավահանգիստները և Բալեարյան կղզիները թշնամական պետութեան ձեռքին գտնվելով, կարող են սպառնալ Անգլիայի հազարակազմութեան գծերին:

Վոչ արևոտ, յեթե վոչ ավելի նշանակութեան ունի Իսպանիան Ծրանտիայի համար, վարի հետ նա անմիջականորեն սահմանակից եւ Ծրանտիան քիչ պատերազմներ չի մղել հանուն այն բանի, վորպէս թույլ չառ Իսպանիայում իրեն թշնամի ազդեցութեանները ախրատեութեամբ շրջանը: Հիշեցնել, վար 1870—1871 թվերին Ֆրանս-պրուսական պատերազմը մաքամը ել ծագեց Հոհենցոլերնների գլխատախտակի անգամին իսպանական դահի վրա նստեցնելու: Գերմանիայի վորձերի հետևանքով: Մինչև այժմ Ծրանտիայի սարսաղակազմական պլանները երկնվում եյին Իսպանիայի բարեկամաբարութեամբ կամ, գունե, չեղածութեան վրա, և դրա համար ել Ծրանտիան բարբոսին հող չեր տանում Ֆրանս-իսպանական սահմանի պաշտպանութեան մասին: Սերը Իսպանիան թշնամական տարրերի ձեռքում և կամ թե ազդեցութեան տակ, դա նշանակում է, վոր Ծրանտիայի համար անհրաժեշտութեամբ շրջան և ներկայանում հաշվի առնելու: Նոր ցամաքային հուկատը և նրա համար առանձնացնել անհրաժեշտ պաշտպանական դիմում աւելու Ալճուհեան, Բալիարյան կղզիները և իսպանական նավահանգիստները վերահսկողութեամբ են յննթարկում ծովային այն գծերը, վորոնք միացնում են Ծրանտիան Մարոկկոյի և Ալճիերի հետ, վորտեղից Ծրանտիան վերցնում և զգալի չափով մարդկային սեղերները իր բանակի համար: Պատերազմի գեպում ծովային այդ գծերը թշնամական Իսպանիան կարող և կարելու Ալճալիսով, Անգլիայի և Ծրանտիայի սարսաղակազմական դրութեան զգալի չափով վատանում է նախապատերազմյան ժամանակաշրջանի հետ համեմատած, իսկ Գերմանիայի դրութեամբ համեմատաբար լավանում և:

Յոսելով մտտակա անցյալի մասին անհրաժեշտ և հիշել, վար յեզրոգական արևնայում Գերմանիայի վորպէս ավելի հին իմպերիալիստական սերութեամբ յուրեքի ախոյանի հայանվելու հետ միա-

ժամանակ տարեկան մայր ցամաքում նույնպես հայանվեց  
նոր խմորերի արտադրանքի յեկվոր՝ ի դեմս Շապուրիայի և նա նույն-  
պես արագ կերպով աճեց և դարձավ խոշոր միջազգային դործնու-  
նա սկզբեց ուղարկուել ինչպիսիք ~~նապատեան~~, արագեւ ել և արդար-  
նարեքական տեսակետեց ~~Սեւրիայի և Ամերիկայի~~ միկնույն  
ավելի հին խմորերի արտադրանքի յերկրներին։ Յեթե Գերմանիան  
իրեն նպատակ և գրել առաջին հերթին իրականացնել իր հեղե-  
մունիան Սեւրիայում, ապա Շապուրիան ձգտուել իր հենց նույն-  
պիսի հեղեմունիայի՝ Ասիայում, ուղղելով իր ազդեցիկութունն  
առաջին հերթին չինական կայսրութեան դեմ, վորտեղ նա ընդ-  
հարվեց այլ խմորերի արտադրանքի արտաբերութեանը շահելի հետ,  
այդ թիւում նաև Գերմանիայի Այս պատմութեանը յիջանի-  
որը վորձել են Շապուրիայից վերջապէս, նրան պատերազմի  
խնկելով Ռուսաստանի հետ։ Սակայն և այս անգամ, ինչպես և  
մյուս դեպքերում, չիրականացան այն գիտլումատեայի հաշիվե-  
րը, վորն ազդեցութիւն յերբորդ տեսութեան հետ խնկեցնելու մեջ,  
նրան ընծաներով վաղաքցելու մեջ տեսում և բարձր իմաստու-  
թեան Ծարտիան Ռուսաստանի հետ մղած պատերազմը շահելով  
և վորտեղ չափով բաւարարելով իր դաւթողական տարածակները,  
Շապուրիան յերբեք չհանդատեցով և սկսեց սպասազորել նոր  
նվաճած դերքերը Չինաստանի վրա հետադարձ հարձակվելու  
և այնտեղից իր քաղաքական և անտեսական մրցակիցներին  
զուրա մղելու։ Թեև Շապուրիան համաշխարհային պատերազմին  
մասնակցեց տրադիտակեցներէն հետ, վերջինները վորտեղին ու-  
տարարել իրենց միացյալ հզորութեանը, վորն ստեղծվեց Գեր-  
մանիայի վրա տարած հաղթանակի հետևանքով, Շապուրիայի  
ազդեցական ասնձաւարելու համար։ Մեկուսացված, վոր մի հենա-  
բան չունենալով, Շապուրիան ասիական յերդով 1923 թիւին ստու-  
բադրել Վաշինգտանի պայմանագիրը, վորի շնորհիվ նա պարտա-  
վարվեց Չինաստանի անձեռնմխելիութեան նկատմամբ վորտեղե-  
ղութեանը չանել։ Այդ, իհարկեւ, չեք նշանակում, վոր նա հրա-  
ժարվեց իր ազդեցիկ մասադրութեանը յերբեք, 10 տարի շարունակ  
նա իր պարտավարութեանը կատարեց, իսկ հետա վորտեղ ստու-  
գել այն դործոններին կայսրութեանը, վորսնք նրա վրին զոտով  
փաթաթեցին այդ պարտավարութեանը 1931 թ. նա սկսեց իր  
հարձակումը Մանչուրիայի վրա և, չհանդիպելով վոր մի սնալ  
դիմադրութեան Վաշինգտոնի պայմանագրի նկատմամբ մասնակից-  
ներին կողմից, ամբողջ Մանչուրիան սկզբապահայի յենթարկեց և  
սկսեց առաջ շարժվել դեպի Չինաստանի կենտրոնը և հարավը,



դարձյալ չհանդիպելով վոչ մի արատաքին գիմադրության: Այդ գործնագության շարունակությունն են հենց հանդիսանում Ճապոնացիները և Երկաթուղիի, Ծանհայի, Նանկինի և չինական յերկաթուղային կարևորագույն դժերի գրավումը: Վրասահարելով Մեծ Բրիտանիայի և Ամերիկայի տեսարական և Ֆինանսական շահերը, Ճապոնիան իր շարժումով դեպի հարավ անմիջական ապառնալիք և սանցքում Հոնկոնգին—Անգլիայի չափազանց կարևոր սարսակագիական դիրքին, իսկ հետագայում ել ավելի կարևոր դիրքին—Սինգապուրին, Անգլիայի ավտորալիական ախրապետություններին և նույնիսկ Հնդկաստանին: Վրասնդ ստեղծվում է նույնպես Ձիսաստանին սահմանակից Ֆրանսական գաղութ Հնդկաստանին: Սեզ տվյալ դեպքում մենք տեսնում ենք, թե ինչպես լիկվիդացիայի յե յենթարկվում արևմտյան պետությունների նվաճումներից մեկը, վորն ուղեկցում էր պատերազմի վերջանալուն, և զգալի չափով վատանում և Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ սարսակագիական դրությունը նախապատերազմյան մամանակաշրջանի հետ համեմատած:

Անհրաժեշտ և կանգ առնել նաև Ազգերի լիգայի վրա Միջազգային այդ կազմակերպությունը, ինչպես հայանի յե, սանցքվեց Վերսալի պայմանագրի ստորագրման հետ միաժամանակ իրերի նոր կարգի, նոր սահմանների, պետությունների միջև այն նոր փոխհարաբերությունների ամբացման և պահպանման նպատակով, վորը հաստատվել և Վերսալի և այլ հետպատերազմյան խաղաղության պայմանագրերում: Լիգայի անդամ վորևս պետության սահմանի խախտման փորձը պետք է առաջացնի կոլեկտիվ հակահարված ազդեցություն՝ Լիգայի բոլոր անդամների կողմից, և հակահարված վոչ միայն տնտեսական ու Ֆինանսական, այլ նույնիսկ սազմական միջոցառումներով: Այսպիսի տեսք ունի Ազգերի լիգան թղթի վրա, սակայն գործնականում ստացվեց միանգամայն ուրիշ բան: Հակառակ իր կանոնադրության, Ազգերի լիգան միայն թղթե բանաձևերով պատասխանեց Ճապոնիայի հարձակմանը Ձիսաստանի վրա և նրա կողմից չինական հակայական նահանգի—Մանչուրիայի ոկկուզացիային: Մի դեպքում ազդեցիկ անպատիժ մնալը խրախուսեց նոր ազդեցիկ մյուս դեպքում: Իրան հետևեց Հարեշտանի գինյաձած գրավումն Իսալիայի կողմից, և այստեղ Ազգերի լիգան ազդեցիկ դժին լուրջ սցենարյուն ցույց չափեց: Մինչդեռ Հարեշտանը գտնվում և կամունիկացիոն այն գծի մոտ, վորը

միացնում ե Անդլիան Հնգկաստանի, Ալխորալիայի և Նրա այլ  
ախրապետութիւններէ հետ, և այնպիսի ծովային համեմատա-  
բար ուժեղ պետութեան զերելշխումը Հարեշտանի վրա, ինչպի-  
սին և Իտալիան, վտանգ կտեսնենր այդ ուղիների համար: Ան-  
միջական վտանգ ստեղծվում ե նաև Հարեշտանին սահմանակից՝  
Անդլիայի Կորիկյան տիրապետութիւնների համար (Կենիա,  
Սուդան): Հարեշտանի գրավման կապակցութեամբ Ֆրանսիան  
նաւխտեա կորցնում ե վոչ պակաս կարևոր դիրք, այսինքն՝  
Նրան պատկանող այն յերկաթուղու կոնցեսիան, վորը միացնում  
ե Հարեշտանի մայրաքաղաքն ամենամուտիկ նավահանգստի  
հետ: Այնուհետև, տեղի յե ունեցել Գերմանիայի և Իտալիայի  
ինտերվենցիան Իսպանիայում և ապա Յապոնիայի հետագո  
հարձակումը Չինաստանի վրա, Ազգերի լիգայի լրակատար ան-  
դործութեան ժամանակ: Այդ ըսնը միանգամայն խախտեց Լի-  
գայի հեղինակութիւնը, Նրան դադարեցին հաշիւ տանել, դա-  
զարեցին Նրանից վախենալ: Ազգերի լիգայի անդամներից վա-  
մանք հետանում են Նրանից, մյուսները միակողմանիորեն իրենց  
վրայից պսում են իրենց վրա վերցրած պարտավորութիւնները,  
Ֆալով Ազգերի լիգայի անգամ միայն անվանապես: Այն անեղ  
ուժից, վոր պետք ե ներկայացնել իրենից Ազգերի լիգան, Մտա-  
ցել և միայն մի դուռնա ստվեր: Այսպիսով, լիկվիդացիայի յե  
յննթարիվում համաշխարհային պատերազմի հետևանքներից ևս  
մեկը, վորը հաղթողները համարում եյին իրենց հատուկ յերախ-  
տիքը: Իմ թված փաստերը (նկատեք, փաստերը, և վոչ թե յնն-  
թաղութիւնները), թվում ե, թե միանգամայն ըտվական են  
ընտրուելու համար վերջին վեց տարվա միջադպային զեպքերը՝  
վորպես համաշխարհային պատերազմի հետևանքով սակզմած  
միջադպային կարգի տարեհանուկան սխառմամտիկ լիկվիդացիա-  
յի յննթարիվման և հետպատերազմյան միջադպային կարևորա-  
զույն պայմանագրերի վոչնչացման ժամանակաշրջան: Կարելի յե  
նաւխտեա խոսել այն յերկրների գիվանագիտութիւնների և  
նընդհատ պարտութիւնների կամ նաւխտիկ համատարած պար-  
տութիւնների ժամանակաշրջանի մասին, վորոնք հանդիպանում  
են իմ կողմից մատնանշված հետպատերազմյան պայմանագրերի  
նախաձեռնողները և հիմնական հեղինակները: Մինչդեռ, յեթե  
կարդանք ռեակցիոն ուղղութիւնների ոտարերկրյա մամուլը,  
կարող ե այնպիսի ապավորութիւն ստեղծվել, վոր կարծես թե  
ազրեակով յերկրների հաջողութիւնները հանդիսանում են դլտո-  
վաբապես իտրերդային Միութեան պարտութիւնը, վորը Նրանց

առիթ և ապրիտ միայն հռոտարու և շարտինդութ յուն աներուս  
կարելի յի կարծել, վար Անբասալի, Սեն-ժերմենի և հաշաւթ յան  
մյաւս պայմանադրերը, Վաղինդոսնի պայմանադիրը, Ազդերի լի-  
զայի պակալ մշակված են և զգված կոմիտերնի կողմից, կամ,  
գոնն, խորհրդային կատարութեան կողմից: Մասանում են, վար  
Մարհրդային Միութեանը վոչ մի առնչութեան չի ունեցել այդ  
պահտերի սանդժման գործում: Մասանում են, վար հիւրեր յան  
խմելերիալիտասական քաղաքականութեանը հանդիտանում և Գեր-  
մանիայի կազերական կալիտայի քաղաքականութեան շարունա-  
կութեանը և իրականացուող, յերր կոմիտերնը և Մարհրդային  
պետութեանը զեւ աշխարհի յերեոին չկային, և վար ճապոնիա-  
յի այժմյան պրեսիով քաղաքականութեան սկիզբը Չինաստա-  
նում, վարն անց և կաղվում այժմ կոմիտերնի զեւ մղվող պայ-  
քարի զրոյի տակ, վերարկում և նույնպէս Մարհրդային պե-  
տութեան ծաղմանը նախորդող ժամանակաշրջանին:

Նշանակում և արդյոք այդ, վար Մարհրդային Միութեանը  
միանդամայն մի կողմ և Մոււմ կատարվող գեւազները, վարն  
վոչ մի կերպ նրա խաթրին չեն գիտւում և նա կարող և նրանց  
նկատմամբ վերարկելի լիակատար տնտարկութեանը Բար-  
կե, վոչ, Շիրա և, մենք չենք մատնակցում խմելերիալիտասական  
շահերի պայքարին: Մեղ ոտար և վարն մեկի տնրիտարիան  
զրավելու միաքը, և զրու համար ևլ մեղ համար, իհարկե, միե-  
նույնն և, թե վար տերութեանը կշահադոբի ալա կամ այն գա-  
ղութը, կնվանի այս կամ այն արտաքին շուկաները, իր տիրապե-  
տութեանը կենթարկել այս կամ այն թույլ պետութեանը: Սա-  
կայն, բանը նրանում և, վար Գերմանիան ձդաւում և վոչ միայն իր  
իրավունքները վերականգնմանը, վարը վասնասակ և արված Անր-  
ոսայի պայմանադրով, վոչ միայն իր նախադատերադմյան կայսե-  
րական սահմանները վերականգնելուն, այլ իր արտաքին քա-  
ղաքականութեանը կատուցում և անսահմանափակ ազդեթիւյն  
հիման վրա, հույս ունենալով մինչևեակ այսպէս կռված գերմա-  
նական յեղին յենթարկելու բոլոր մյաւս յեղերը և ժողովուրդ-  
ները: Նա տանում և բայտայա կատաղի հակախորհրդային քա-  
ղաքականութեան, կատակենլի կերպով հաճախ հիշելով այն ժա-  
մանակները, յեք սեւաւանական որդենը տիրապետում ևր Մերմ-  
րալթիկում, և հրապարակորեն տարվում և Ուկրաինան և նույն-  
իող Ուրալը խելու յերազներով: Յեւ ով զիտե, ելի ինչպիսի  
յերազներ և տեւում նա ճաղոնիան իր ազդեթիւյնի ճրաղում  
նույնպէս չի սահմանափակվում Չինաստանի սահմաններով և



Նույնպէս յերբեմն իրեն թույլ և տալիս յերազելու խորհրդային հոգիքի մտքին՝ Իսկ մենք չենք ուղուս, վորդեղիք խորհրդային հոգիքը լինելին նույնիսկ վորեն մեկի նման յերազներք և յերազատուությունների տարեկա։ Ենքը համաշխարհային աստուրեղուս գործուս ևն պետություններ անասման ազդեցիվ մտադրություններով, վորոնք ըսցելիքայ խուսում են իրենց ձգտումների մտքին՝ տիրապետելու ամբողջ մայր ցամաքներ, ոտքիացնելու և նույնիսկ կասարելու ամբողջ մտղովորդներ և ջեղիք, վոչ մի պետություն, ինչքան ել վոր նա ուժեղ և հետու լինի, չի կարող ապահովում լինել այն բանից, վոր նման կատարի ադրեախայի ալիքները չեն զլորվի մինչև նրա սնվական սահմանները՝ թեկուզ հենց հետագոր աստղայուս։

Ահա թե ինչու մենք անմիջականսրեն զահարդարված ենք կատարվող դեպքերով, սակայն կա և ուրիշ, ալիլի ընդհանուր զոս, վորը մեզ միացնում և ուրիշ պետությունների հետ, — զս խողաղության պահպանությունն և իտղաղության պահպանությամբ զանաղարդված են բոլոր յերկրների աշխատավորները, վորոնց վիճակի նկատմամբ մենք չենք կարող անասրելք լինել։ Իտղաղության խախտման համար, ջայճայման համար, վորն անխուսափելի յն պատերազմի հետևանցով, հատուցում են վերջիվերջ իրենց արշաւով, իրենց կյանքով, իրենց աղքատիկ կարողությամբ վոչ թե տիրապետող դատակարգերը, այլ աշխատավորները։ Լավ և արդյոք համաշխարհային պատերազմից հետո սահմանված կարգը մինչպատերազմականից, թե վաս և, մենք համենայն դեպս դեմ ենք նրա գրգռությանը նոր արշաւանեղ պատերազմի միջոցով։ Մտնովանդ վոր վոչ մի յերաշխիք չկա, վոր պատերազմը կարող և տալ ալիլի լավ, տրդարացի կարգ։ Զի կարելի մտանալ, վոր Բրետտալիստիկ հաշաւությունը վորպէս արդյունք կալներական Գերմանիայի, վերտալից ալիլի լավիք չկր։ Գեա ալիլի քիչ արդարացի խողաղություն կարելի յն սպտել հիւրերյան Գերմանիայից նրա սասելմի միջնադարյան թեախաներով, մարդատյացությամբ և կողիտ նյութական ուժի գովարանությամբ, վորպէս բարձր բանականություն։

Այն գիտակցությունը, վորը ներկա միջազգային պայմաններում խողաղության պահպանությունը և պատերազմների կանխումը պահանջում և կոչեկիլ ջանքեր և բոլոր խողաղաոտրական յերկրների գործակցություն, մեզ բերնց ժընել, ուր մեզ այդ նպատակի համար և հրավիրել եր Ազգերի լիդան։ Մենք այն ժամանակ դեռևս չդիտելինք, վոր, ինչպէս այդ այժմ բացա-

արում են պետութեաններէ կառավարողները, վորոնք չիմենք են Ազգերի լիգան, Լիգայի կանոնադրութեան հարկածները, վորոնք նախատեսուած են ազրեախայի զոհին միատեղ պաշտպանելը, կազմված են յեղել այն դեպքի համար, յերբ Լիգայի մեջ կմտան են առանց բացառութեան բոլոր պետութեանները և նրանք բաւրն առանց բացառութեան իրենց խողող կպահեն, այնինքն այն դեպքի համար, յերբ յերկրի վրա ազրեախայի շին լինի, և վոր ազրեախայի հայտնվելու մոտենալից այդ հարկածները պետք ե ընդունվին վորպես հնարաններ: Մենք գնացինք Լիգա, յինքնազրեախ, վոր Լիգայի պակտը հանդիսանում ե հատուկ հանդիսավոր միջազգային պայմանագիր, բոլոր իր մտտերով պարտագիր այն բոլոր պետութեաններէ համար, վորոնք նրա սակ դրել են իրենց ստորագրութեանը: Մենք գնացինք այստեղ խաղաղութեան պաշտպանութեան համար, պաշտպանելով ժողովուրդներէ ընդհանուր շահերը, գիտենալով, վոր յուրաքանչյուր ընդհանուր դրո՞ պահանջում ե յերբեմն մասնավոր շահերի ճնշում, պահանջում ե կուրկախի յուրաքանչյուր անդամից զոհաբերութեաններ: Մենք գնացինք մեզ վրա վերցրած պարտականութեաններէ լոյալ կատարման դիտավորութեամբ: Յեղ, իսկապետ, յերբ մեր Ազգերի լիգա մտնելուց հետո սեղի ունեցավ Իտալիայի հարձակումը Հարեշտանի վրա, մենք, Հարեշտանում վոչ մի շահ չունենալով և հաշվի չառնելով Իտալիայի հետ մեր ունեցած փոխադարձաբար ձեռնտու հարաբերութեանները, հանդես յեկանք Լիգայի կողմից ազրեախայի զոհի նկատմամբ ունեցած նրա պարտքի կատարումը պաշտպանելու համար և լոյալ կերպով կատարեցինք Լիգայի կողմից ընդունված վորոշումները: Սակայն այն պետութեանները, վորոնք Հարեշտանում ամենեց շատ շահեր ունեցին և շահագրգռված եյին այն բանում, վորպետեղի թույլ շտան նրա դրավումը Իտալիայի կողմից, հետեւելով դեռ սոսիալից սկիզբով ինքնապարտադրական քաղաքականութեանը, պատռեցին Լիգայի ակցիան և դրանով իսկ իրենց վրա պատանխանաւորութեան վերցրին ազրեախայի հետագա արձակման համար: Մենք ել, մեր հերթին, յերբ ազրեախան վերաբերում եր Իտալիային, վորի վրա հարձակվեցին Իտալիան և Գերմանիան, իսկ հետո Զինաստանին, ուր նորից ներխուժեց Ժապոնիան, հաճախակի ձայն ենք բարձրացրել հոգուտ ազրեախայի այդ զոհերի և լիակատար կերպով մտանակցել ենք նրանց ցույց արված այն համեմատ սղնութեանը, վորը հանձնարարվում եր Ազգերի լիգայի վորոշումներով:

A 99781

Միջոցառումներն կուղևորվի համադործակցութեան միջոցով խա-  
 դարութեան պահպանութեանն ըստ ամենայնի աշակցելու իր  
 ձգտման մեջ դիտենալով, զոր առանց Խորհրդային Միութեան  
 չի կարելի ստեղծել սեփական յեզրուակաւ և համաշխարհային  
 այնպիսի հովատարակչութեան, զորի առաջ նսեմանար ազրե-  
 սիան, խորհրդային կառավարութեանը համաձայնեց մտնակցել  
 փոխադարձ սզնութեան սեղիտնալ պակտերին: Յերբ առաջարկ-  
 ված Արևելյան սեղիտնալ պակտը խափանվեց Գերմանիայի և  
 Լեհաստանի կողմից, Խորհրդային Միութեանը Ֆրանսիայի և  
 Չեխոսլովակիայի հետ կնքեց փոխադարձ սզնութեան պակտեր:  
 Ֆրանսոսկան սեակցիոն քաղաքագետները և մուսուլիսաները  
 փորձեցին և դեռ այժմ ել փորձում են պատկերացնել այդ պակ-  
 տերը զորպէս ինչ-ձոր մի նվեր կամ բարեբարութեան Խորհր-  
 դային Միութեանը: Նրանք այս դեպքում չեն նկատում կամ  
 ցույց են տալիս, զոր չեն նկատում, թե ում դիրքերի վրա յեն  
 հարձակվել և շարունակում են հարձակվել ազրեսիվ պետութեան-  
 ները, նվաճելով այդ դիրքերը: Ֆրանսիայի և Չեխոսլովակիայի  
 հետ կնքած մեր պակտերը, բացի պատերազմի դեպքում սզնու-  
 թեան ցույց տալուց, նաև նպատակ ունեն կանխելու կամ փոք-  
 բացնելու պատերազմի հենց վտանգը Յեզրուակայի վորոշ մասե-  
 բում ի դեմտ այն սպառնալիցի, զորը կախված և հիմա Չեխո-  
 սլովակիայի գլխին, ամբողջ աշխարհին պետք է պարզ լինի, զոր  
 խորհրդային-չեխոսլովակյան պակտը իր այդ ֆունկցիան կա-  
 տարում է, զոր նա հանդիսանում է ամենից ավելի, յեթե վոչ  
 միակ խոշոր գործոնը, զորը հանդոտացնում է միջնուրարը Չեխո-  
 սլովակիայի շուրջը: Անհրաժեշտ և տեղի, զոր, խոտանալով ազ-  
 բեթայի զոհին ոչնելու, խորհրդային կառավարութեանը չի  
 սպասագրւում այդ սզնութեանը զորպէս այդ զոհի վրա ճնշում  
 գործ դնելու միջոց այն նպատակով, զորպէսզի դրդի նրան ազ-  
 բեթայի տառջ անձնատուր լինելու և զործելու այնպէս, զոր-  
 պետի վորակ սզնութեան նրան ավելորդ լինելու: Խաղաղութեան  
 մեր ընդհանուր քաղաքականութեանը մեզ ստիպում է, բնակա-  
 նարար, ցանկանալ, վարպետի այն կոնֆլիկտները, զորոնք ծա-  
 գում են Չեխոսլովակիայում նրա հարևանների հետ, խաղաղ ճա-  
 նադարնով լուծվիլին, բայց մենք իրոտ կերպով ձեանալան ենք  
 զորակ անկոչ խորհուրդ տալուց Չեխոսլովակիայի կառավարու-  
 թեանը, քանի զոր մենք հովատում ենք նրա խաղաղասիրու-  
 թեանը և դոմում ենք, զոր նա ինքը դատավոր և հանդիտանում  
 այն հարցերում, զորոնք վերաբերում են իր պետութեան ներ-

Մ. Մ. Լիստվենկոյ  
 ՍՄՄԿԿ  
 1947 թ. 11 ամիս 22 օր

ՍՄՄԿԿ  
 17

քին հարգազօրմանը, վոր նա ինքը կզանի զիջումների խելացի  
աճամաններ, վորոնք համասեղելի լինեն պետութեան հեղինա-  
կութեան, սուվերենիտետի և անկախութեան հետ, վոր միջադ-  
գային տրամաբան Զեխտարովակիան հանդիսանում և պաշտպան-  
վող կողմ և վոր հետևանքների համար պատասխանատուութեանը  
համեմատյալ դեպք կիրի հարմակվող կողմը

Միջազգային համադարձակցութեան շահերի տեսակետից  
մենք միացանք Բապանիայի գործերին չմիջամտելու համաձայ-  
նութեանը: Մենք յերբեք չենք հավատացել այն առատելին,  
վոր այդպիսի համաձայնութեան ըստակայութեանը խաղաղու-  
թեան համար սղտոնալիք և ոտեղծում: Մենք նաև չհամարեցինք,  
վոր իսպանական օրինական կառավարութեանը գննը մատակա-  
րարելն ընդդեմ մի կույտ խռովարար գններախնների հանդիսա-  
նում և խղանական գործերի միջամտութեան: Այնուամենայ-  
նիվ, միջազգային համերայնութեան շահերի տեսակետից մենք,  
հավատացած լինելով այն բանում, վոր իսպանական կառավա-  
րութեանը ակտիվան ուժերով կհաղթանարի դրախ ոգնութեանից  
դրիված խռովարարներին, ստորագրեցինք համաձայնութեանը,  
մասնք Լանդանի կոմիտեյի մեջ, յենթապակով, վոր նա, գանև,  
իսկապես կապանովի լիակատար չմիջամտութեանը: Մենք հենց  
ոկզրից ֆաշիստական յեղիքների ստորագրութեաններին վերա-  
բերվեցինք առանց ավելորդ վտանգութեան, յերկրներ, վորոնք  
բաց կերպով ծաղր ու ծանակի յեն յենթարկում թղթե պարտա-  
կանութեանները և պայմանագրերը, և զրա համար ել մենք կո-  
միտեյում ստաշարկութեան մտցրինք իսկական հակոդութեան  
ապահովման մասին՝ Ֆրանսական և անգլիական ծավային նա-  
վատորմի ողնութեամբ: Յեա համազգած եմ, վոր մեր այդ ստա-  
շարկութեան ընդունումը վոչ միայն վերջ կդնեք պատերազմին  
Բողանիայում, չառաջացնելով միջազգային վորևև բարդութեան-  
ներ, այլև ավյալ ազրեախային և ընդհանրապես ազրեախային  
կհասցնեք խոտաղուցն հարված: Դժբախտաբար, այն պետու-  
թեանները, վորոնց շահերին, ինչպես յեա արդևն ստաշ ել նշել  
եմ, ամենից շատ և սպանում խալտագերմանական ինտերզին-  
ցիան Բապանիայում, դերադատեցին ազրեադրներին ներողամիա-  
լինելու տակախիան, կանդենցին նրանց անվերջ զիջումներ անե-  
լու ուղու վրա: Ազրեադրները չեն ուզում այդպիսի հակոդու-  
թեան—այդպիսի հակոդութեանը վերացվում եւ նրանք առաջար-  
կում են ուրիշ նրանց ավելի ձևանաու հակոդութեան սխտեմ—  
այդ սխտեմն ընդունվում եւ նրանք Փրանկոյի համար պահան-

ջում են կոխող կողմի իրավունքներ—և այդ իրավունքները խա-  
տապելուս են նրան: Այդ պայմաններում կամխանային վոչ միայն  
ամենափոքր չափով անդամ չհաջողվեց ապահովել չմիջամու-  
թյունը, այլև նա ավելի ու ավելի հակվում և Ծրանկոչի կողմը:  
Մեր դեքը կամխանայում այժմ հանգում և այն բանին, վոր փոր-  
ձենք, ուժերի ու հնարավորություններն չափով, հարթել այդ  
հակվածությունը և թույլ չտանք, զոնն, կամխանայի իր միջա-  
մուտքյունը Իսպանիայի գործերին հսկուա Ծրանկոչին:

Մորերդային կառավարությունը ընտով անտարբեր չի վե-  
րարելուս անդի ունեցող միջադրային դեպքերին, այլ, ընդհա-  
կուակը, պատրաստ և լիովին կատարել և կատարում և իր մի-  
ջադրային համերաշխության պարտքը վորպես խաղաղության  
հետևողական և կրքոտ պաշտպան: Նա չի դադարում բանալ  
մյուս յերկրներն քաղաքակաճության սխալ լինելը, վորը հասց-  
նում և աղբիտիայի արձակման և սանձարձակման, յուրյ առլով  
այդ ազգևախայի կոտեցման և վոչնչացման ուղին: Դեռ վերջերս  
նա հիշեցրեց խաղաղասեր սերություններին շուտովուրթ կո-  
լեկտիվ միջոցներ ձևաք ասնելու անհրաժեշտության մասին՝  
մարդկությանը վրոյ հասնող նոր արյունալից պատերազմից  
փրկելու համար: Այդ կոչին չլսեցին, բայց խորհրդային կառա-  
վարությունը, զոնն, իր վրայից դցեց պատասխանատուությունը  
զեպքերի հետագա դարդացման համար: Մտիայն, պետք և նոյն,  
վոր Մորերդային Միությունը վոչ մի բան իր համար չի խընդ-  
րում, վոչ վոքի վզին վորպես խաղաղից և դաշնակից չի վա-  
թաթելում, այլ միայն համաձայնում և կոլեկտիվ համադարձակ-  
ցության, քանի վոր հատուկ վասնդավսր գրություն և ստեղծ-  
վել վոչ թե իր համար, այլ ստաջին հերթին փոքր յերկրներն  
համար, իսկ յերկրորդին—այն պետություններն համար, վորանք  
պատասխանատու չեն հետպատերազմյան միջադրային կարգի  
համար:

Հիրավի, յիթև այն մղձավանջը, վորից պետք և համայն-  
բահային պատերազմը փրկելու արևմտյան սերություններին, նո-  
րից մեր առաջ հայանվեց, ապա, թողնելով ՍՍՀՄ մի կողմ,  
այժմ ինչպիսի՞ դրություն և ուժերի փոխհարաբերություն և  
ախրում Յեղրոդայում համեմատած նախապատերազմյան ժամա-  
նակաշրջանի հետ: Արևմտյան պետություններին դեմ կանոնած  
խմբավորումը լիովին պահպանել և իր մեջ մասնող տարրերին,  
իսկ նրանցից միքանիսի միջև անդի յև ունեցել ևլ ավելի սերտ  
զոգում: Այդ խմբավորման պետություններից վոչ մեկը չի կապ-



վել կամ թե չե այնքան չի կապվել հակառակ խմբավորման հետ, վարպետի վերջինը կարողանար կոնֆլիկտի դեպքում հույս դնել նրա վրա: Մյուս կողմից՝ յեվրոպական մի խոշոր պետություն վոչ միայն վերջնականապես հեռացել և արևմտայեվրոպական կառվիցիայից, վորին նա պատկանում էր պատերազմի ժամանակ, այլև անցել և հակառակ շտանցքին: Մեծ անդրատլանտյան հանրապետություն մեջ իզոլյացիոնիզմն այնքան մեծ հաջողություններ ձեռք բերեց, վոր նրա եվենտուալ համադրմանկցություն վրա շատ քիչ կարելի չե հույս դնել, մանավանդ յեթե նախորոք հենց Սեվրոպայում չի ձևակերպվի ամուր պոզիած խմբավորում, վորը հակառակ կանգնի ադրեսիային՝ դեպի հաջողություն ունեցած բավականաչափ շանտերով: Մէլ ավելի քիչ ողնություն կարելի չե ուղտել ատիական յերկրներից: Ազգերի լիզան կաթվածահարված և, և յեթե շուտավույթ միջոցներ ձեռք չառնվեն նրա վերականգնման համար, ապա նա կոնֆլիկտի սկզբին վերջնականապես ցիր ու ցան կլինի: Արևմտայեվրոպական տերությունները այլևս չունեն, ըստաույթյամբ Ձեխալովակիայի, վոչ մի դաշնակից Սեվրոպայի միջակ ու փոքր պետությունների միջև Այդ պետություններից միքանիսը բացերաց անցել են ազրեսիվ յերկրների որբիտի մեջ, մյուսները, նրանցից վախենալով, մրթմրթում են չեզոքություն մատին: Ձեզոքության մասին իրենց դեկլարացիաներով նրանք կարծես թե առում են, վոր իրենք հրաժարվում են Ազգերի լիգայի ողնությունից, բարեկամների ողնությունից և հրավիրում են յուրաքանչյուր ցանկացողի, վոր իրենց բռնաբարի:

Վոչ մի կասկածի չենթակա չե, վոր այն ազրեսիվ յերկրները, վորոնք արդեն այժմ կարողացել են ներշնչել այդ յերկրներին այնպիսի վախ, վորպեսզի նրանցից բռնադատեն այդ զեկլարացիաները, մորիլիգացիայից հետո հենց յերկրորդ որը կտախեն այդ յերկրներին խախտելու իրենց չեզոքությունը և նրանց կտախեն իրենց մոտ ծառայություն մտնելու:

Այսպիսին են արդյունքները արևմտայեվրոպական տերությունների «եհախոտական» քաղաքականության, վորը նրանց կողմից հակադրվում և մեր կողմից պաշտպանած կուլեկտիվ անվտանգության սխոտեմին՝ Ազգերի լիգայի ամբապնդման ժամանակ, վորը, կարող և պատահել, պես ևս այժմ էլ կարողանաք փրկել դրությունը:

Հարց և ծագում, ինչք մեջ են թաղնված յեվրոպական այն մեծ տերությունների այդպիսի տարբրինակ քաղաքականության

պատճառները, վորոնք դարերի ընթացքում Յեղիքոպալում և մյուս մայր ցամաքներում խաղապել են գերակշռող (ДОМИНИРУЮЩИМ) դեր, ունեն իրենց ակտիվում մեծազույն սազմանովային հազմանակներ, իրավամբ միշտ հպարտացել են իրենց փորձված, հմուտ դիվանագիտությամբ, ամենուրեք և միշտ կատուրե կերպով պաշտպանել են իրենց շահերը և պահպանել են իրենց հեղինակությունը, և վորոնք այժմ անձնատուր են լինում արևատեսապես և Ֆինանսապես հյուսիսում՝ դեռևս յերեկվա անդին պետությունների առաջ, թույլ տալով նրանց տիրակալելու Յեղիքոպալում, Ասիայում և Աֆրիկայում, թույլ տալով նրանց ուղիղ տեսիլու իրենց տեսարանի անտարանի նավատորմը և նույնիսկ իրենց տերիտորիան, կրելով նրանց կողմից նույնիսկ ամեն տեսակի ծաղրաբանակ և վիրավորանք, թող շնորհիվ այդպիսի քաղաքականության անփութության ազդեցիվ յերկրները այժմ զգալի չափով ամրացած և միավորված լինեն, ներկայացնելով բավականին պատկասելի, թեկուզ բնավ դեռ վոչ զճառակալան ուժ, բայց չե՞ վոր յեղել են մոմենտներ, յերբ նրանք գործել են անջատանջատ և միանգամայն թույլ ու անողնակալ են յեղել: Այդպիսի մոմենտներ յե վերարևելում անշուշտ հարձակումը Մանջուրիայի վրա, յերբ բավական եր Աղղերի լեզայի կողմից սանկցիտներ յե իրական սպառնալիք, կամ Անդլիայի, Ամերիկայի մի խորհրդակցությունը իրորդային Միության հետ, վարպետի ճապոնիան անհատող հետ նահանջեր և բաց թողներ ավարն իր ձեռքերից: Հենց այդպիսի մոմենտ եր 1936 թ. մարտի 7-ը, յերբ Գերմանիան՝ խախտելով Վերսալի և Լոկարնոյի պայմանագրերը, իր զորքերն ուղարկեց Հոնոտի դեմիլիտարիզացիայի յենթարկված զոնան և յերբ բավական եր միայն անգլո-ֆրանսական միտպանալից կանչ, Ֆրանսիայի սեզերվիտաների մի դատի մորլիդայիան, վորպեսզի Գերմանիան հետ նահանջեր: Նույնը կարելի յե սեղ նաև իտալո-գերմանական ինտերվենցիայի սկզբի մասին Իտալանիայում, յերբ բավական եր, վոր Անգլիան ու Ֆրանսիան իրենց նավատորմով շրջապատելին իտալանական ծովափերը և հաստատապես հայտարարելին, վոր նրանք չեն հանգուրթի վորևե մեկի կողմից Իտալանիայի գործերին միջամտելը, վորպեսզի ինտերվենցիան անմիջապես դադարեր—առանց վորևե մի կրակոցի տաանց պատերազմի վորևե սիսկի: Բավական եր զճառակալ գործադրություններ կամ նույնիսկ զճառակալ խոռքեր այդ մոմենտներից մեկում, վորպեսզի մնացած և հետագա մոմենտներն ընդ-

հանրապետ յերբեք չհասնելին: Ինչու ապա այդ գործուղութիւնսն  
ներք և խոտքերը չեղան:

Այդ հարցերէն պատասխանները չարժի փնտել բացառա-  
պէս սխալ դիվանագիտութեան մեջ, վոչ եւ արտաքին քաղաքա-  
կանութեան ասպարեզում, այլ ավելի շուտ՝ սոցիալ-քաղաքական,  
դասակարգային ստուարեզում:

Իհարկէ, դիվանագիտական սխալները կայանում են նրա-  
նում, վոր արեւելիկ պետութիւններէ յուրաքանչյուր անկ պա-  
հանջի հետևում, նրանց առաջնորդների յուրաքանչյուր ուղղմա-  
տենչ ճտտի հետևում, նրանց մամուլէ հմարեն զեկալտրվող  
կառավարիայի հետևում անպայմանաբն յերևում ե պատերազմի  
ուրվակունք, բայց եյութեանն այն և, վոր պատերազմի սխալը  
հասկապէս վարեցնում և այժմ արևմտյան բուրժուազիային հե-  
տևյալ պատեհաւանութիւն: Մեր ժամանակ, վոչ անցյալ դարերի սրի-  
նակով, պատերազմները չեն մղվում միմիայն ասպետներէ և  
ֆեոդալների կողմից նրանց սպասավորների հետ միտտին, միմի-  
այն վարձկան և ոլրոֆեսիոնալ բանակներէ կողմից: Այժմ պատե-  
րազմների մեջ ներդրումում են ժողովրդի լոյն մասսաները, ժո-  
ղովուրդներն ամբողջապէս: Լուրջ կանֆլիկտէ մեջ հազմանակ  
տանելու համար պահանջվում են ամենահակալական զոհեր, ժո-  
ղովրդի ամբողջ սեփերի լարում, բայց վերականգն ժողովրդին վո-  
ղեհնչել զեպի սիրազորութիւն, ձեռք բերել նրանից անհրա-  
մեշա զոհեր, կարելք ե լինում հազմութեան գեպցում նրան ինչ-  
վոր բան խոտտանալ: Մենք տեսանք, վոր համալրարհային պա-  
տերազմից հետո համարյա բոլոր պետութիւններում սիրող դա-  
տակարգերը ստիպված յեղան լայնացնել բանվորների և մանր  
բուրժուազիայի քաղաքական իրավաւնքները և լավայնել նրանց  
տնտեսական դրութիւնը: Ազգերի լիդայի ստեղծումը նախակա  
վորող չափով հանդիսանում ևր հատուցում բառ մուրհակներէ,  
վարակիները արվել եյին ժողովուրդներին պատերազմի ժամա-  
նակի կատարումն այն լողունդի, թե տվյալ պատերազմը կլինի  
վերջին պատերազմը, թե կանցկացվի համընդհանուր զինաթա-  
փութիւն և խաղաղութիւնը կառավարվի ընդմիջտ: Ատանհանա-  
բար այդ զինումները հետ վերցվեցին, զինաթափման և հալի-  
տենական խաղաղութեան մասին խոտտումները մեռւմ են անկա-  
տար: Յե՛վ ա՛նա, յերկյաւզ և ծագում, վոր նոր պատերազմից հե-  
տո բանվորները, դյուրացիները և մանր բուրժուազիան, դառը  
վործից իրատոված, ավելի մեծ համառութեամբ կտրապայանեն  
իրենց շահերը: Այնուհետև, արևմտյան պետութիւններէ կառա-



վարդ դասակարգներէ միջև քիչ մարդիկ չկան, վորոնք միամտո-  
րեն համատոււմ են, վոր ֆաշիզմը հանդիսանում և խոկապես յեր-  
կարտակ մի վաղաց (ճարճը) բնորոշում բանվոր դասակարգի հար-  
նակմանն Յեւ վորովհետև ազրեխիվ պետութեաննը հանդիսա-  
նում են միամտամանակ ֆաշիզմի պատվարը, այսինքն՝ մի յեր-  
կուս, վոր ազրեխիվ պետութեաննը պարտութեանը պատե-  
րագմի ժամանակ կամ նույնիսկ նրանց դիվանդադիտական պար-  
տութեանը կարող և դուրս դալ ֆաշիզմի պարտութեան և բան-  
վորական շարժման դեմ ստեղծված արհեստական պատվարների  
վաճառուները Դրան ավելացվում և մի յերկուսդ ևս, վոր ազրեխիվ  
յերկրներէ դեմ մղվող պայքարի անհրաժեշտ համասարակչութեան  
համար անխուսափելիորեն կտահանջվի համադրեմակցութեան  
նարհարդային Միութեան հետ և այդ կարծես թէ նույնպես կարող  
և անդրադառնալ ներքին քաղաքական պայքարի վրա սեակ-  
ցիոն շրջաններէ համար անբարենպաստ պայմաններէ իմաստով  
Այսպիսով, դուրս և դալիս, վոր այդ շրջանները պարագասում են  
զոհել իրենց ազգային շահերը, վտանգի յեմթարկել և նույնիսկ  
կորցնել իրենց պետական դիրքերը՝ հանուն իրենց սոցիալական  
և դասակարգային դիրքերի պահպանութեան Ահա թէ ինչպիսի  
նկատառումներով և թելադրվում մեր դիտած մի շարք յերկրնե-  
րում արտաքին քաղաքականութեան թուլութեանը և պասիվու-  
թեանը, ֆաշիստական ազրեխորներէ առաջ քաղաքութեանը և  
զիջողութեանը, վորի հետևանքով առաջ յեկավ ուժերի փոխա-  
բարերութեաններէ արմատական փոփոխութեան Յեւ վրագայում  
և ամբողջ աշխարհում:

Այդպես և, իհարկե, ամենից շատ սեակցիոն, դեպի աշխա-  
տավորութեանն ունեցած իրեն դասակարգային ստելութեան  
մեջ բուրժուազիայի ամենից շատ կուրացած մասի քաղաքակա-  
նութեանը, կան, իհարկե, բուրժուազիայի ներկայացուցիչներ և  
շրջաններ, վորոնք այլ հայացքներ ունեն, վորոնք, չհրաժարվե-  
լով իրենց դասակարգային արտոնութեանններից, ցանկանում են  
առաջին հերթին պաշտպանել իրենց պետական շահերը, իրենց  
ազգային անկախութեանը, իրենց ազգային և համամարդկային  
կուլտուրան, վորոնք ֆաշիզմի մեջ տեսնում են միայն վաղան-  
ցիկ յերկուսի: Այդ յերկու կանցիպցիայի տարբերութեանն են  
հենց բացատրում լայն հակասութեանները, վորոնք գոյութեան  
ունեն առանձին բուրժուական քաղաքական զործիչների միջև  
Ֆրանսիայում, Անգլիայում, Ս րիկայում և կապիտալիստական  
այլ յերկրներում, Ինչպես, որինակ, Լավալի, Ֆլանդենի, Չեմբեր-

լենի, Երբիոյի, Պյեր Կասի, Իդենի, Թուզվիտի, Զերչիլի, Լոյզ-  
Ջորջի և այլոց միջև Արտաքին քաղաքականութեան հարցերի  
շարքը վեճեր անգլի յեն ունենում էիննականում զուտ դասակար-  
գային շահեր կրողների միջև, մի կողմից, և ազդային, հայրե-  
նասիրարար արամադրոյան տարրերի միջև, վորոնք գերազանցա-  
պես արտացոլում են մանր բուրժուազիայի, ինտելիգենցիայի և  
աշխատավորութեան հայացքները,—մյուս կողմից Այդ գծով և  
հենց տեղի յե ունենում պայքարը Ազգերի լիգայի ներսում,  
Այն պետութեանները, վորոնց մեջ ներկայումս գերակշռում և  
ազդային, յե կասեյի, հայրենասիրական և տվյալ դեղքում ա-  
վելի առաջողում տարրերի կոնցրետացիան և վորակոյ արտաքին  
քաղաքականութեան վրա վորոշ ազդեցութեան ունեն բանվոր  
դասակարգի առաջավոր խովերը, այդ պետութեանները լիովին  
պաշտպանում են Ազգերի լիգայի կախկաթով անվտանգութեան և  
ազդեհորենների դեմ սանկցիանների պարտադիր լինելու սկզբունք-  
ները: Ընդհակառակը, այդ սկզբունքների դեմ հանդես են դա-  
լիս կիսաֆաշիստական պետութեանները (Ֆրաշիստական պետու-  
թեաններն արդեն Լիգայից հեռացել են) և այն պետութեան-  
ները, վորոնք զոնվում են Ֆրաշիզացիայի պրոցեսում, ինչպես,  
որինակ, Լեհաստանը, Հունգարիան, հարավամերիկյան յերկրնե-  
րի մեծամասնութեանը և այլն: Տառանվող, միջոնկյալ դիրք են  
դրածում Անգլիան և Տրանսիան, վորակոյ գեա վերջնականապես  
չի ավարտվել պայքարը վերոհիշյալ տեղեկներն ներկայա-  
ցուցիչներն միջև:


Սակայն, դուք կարող եք ինձ հարցնել. ապա ի՞նչպես բա-  
ցատրել ֆրաշիստական ազդեհիվ յերկրների վարքագիծը: Ձե՞ վար  
նրանք ևլ են արտացոլում խոշոր ֆինանսական կապիտալի շա-  
հերը, ապա ինչպե՞ նրանք չեն վախենում պատերազմի սխեկից և  
նրա սոցիալական հետևանքներից: Բայց, նախ, ինչպես ինձ վի-  
ճակվեց արդեն բացատրել, նրանց արտաքին քաղաքականու-  
թեան դեմքը հանդիսանում և գերազանցապես սպառնալիքը,  
շանամբ և խաբեյութեանը:

Նրանք տեսնում են, վոր այդ միջոցների ոչնութեամբ  
նրանց այնքան և հաջողվել վախեցնել և անարեկել մյուս յեր-  
կրներին, վոր նրանք համոզում են իրենց նպատակին համարյա  
թե առանց վորեւ մի կրակոցի: Չենքով նրանք հարձակվում են  
առայթմ միայն ակնհայտնի թույլ, անզեն կամ վատ սպառազին-  
ված յերկրների վրա, ինչպիսիք են Հարչիստանը և Չինաստանը:  
Ինչ հարց և, պատերազմի սխեկ կանեն նրանք արդյաք, յերբ

Նրանց մտտ միտք կլինի լուրջ գիմազության սպասելու և յերբ  
Նրանց զեմ կկանգնեն Նրանց հավասար, կամ ևս տեսվել Նրան-  
ցից զերազանց սեփեր ունեցող պնասություններու կարելի չե հու-  
սայ, վոր Հարեշատանի փորձը, վորի նվաճման վրա վիճակվեց  
ծախսել ալիւի մեծ սեփեր և ժամանակ, քան թէ յենթադրվում  
եր, և վորը, ինչպէս վրոմանց հաստատում են, դեռևս վերջնա-  
կանապէս չի նվաճված. Իսպանիայի փորձը, վորանց Գերմանիա-  
յի և Իտալիայի միտվորված սեփերով սոսա արդեն յերկու տարե-  
յի չհաջողվեց ընկնել խալանական ժողովրդի հետասությունը.  
Յինաստանի փորձը, վորտեղ յենթադրվող սաղմական դրոսանքի  
վախարեն ստացվեց ամենահամառ սպասելագամ, վորի վերջը չի  
յերևում. վերջապէս, համառ սպասելագամի պատրաստ Վիստալ-  
վակիայի փորձը թելագրում են ազրեսորներին հետագայում մեծ  
չըջահայեցողության և զղուշության անհրաժեշտությունու կարելի  
չե յենթադրել, սակայն, վոր ազրեսիվ յերկրները գիտակցում են,  
վոր Նրանք չպի սե սահմանն անցած խաղացողները խաղն են  
խաղում և վոր, իրենք ել այդ բանը չցանկանալով, Նրանք կա-  
րող են խոշոր սպասելագամի բռնվել այդ սպասելագամի բուր ան-  
խառնակելի հետևանքներով, Իսոյց ազրեսորները յենթադրում են,  
վոր Ֆաշիզմը—դա կապիտալիզմի վերջին խաղադուրքն և, իսկ  
Ֆաշիզմը, բացի ավանայութաների ու սղորտի քաղաքականու-  
թյունից, ուրիշ քաղաքականություն տանել չի կարող, քանի  
վոր տանելով ժողովրդի արյունազրկման, Նրանից բուր հյուս-  
թեքը ծծելու ցներքին քաղաքականություն, նա պետք և հանուն  
ինքնապտոզանման հավասարակշռի այդ քաղաքականությունը  
արտացեն քաղաքականության հաջողություններով, լինի այդ  
գիվանագիտական, թե ուղմական հաջողություն:

Վրոմանց ազարաը, մյուսների վախեցածությունը, վորն իր  
հերթին թե և տալիս այդ ազարտին, անկատկած ստեղծում են  
խիստ տաղնապալից միջագոյային դրություն: Ընդհանուր խա-  
ղադությունը վորեւ տեղում խախտված չտեսնելու մեր խիստ  
ցանկությամբ հանդերձ մենք, ընտկանարար, նույնպէս չենք  
կարող անհանդատություն չզգալ: Սակայն մենք հաշվի չենք տո-  
նում, վոր կապիտալիտական պետություններն իրար հետ ինչ-  
դիսի դործարքի մեջ ել վոր մտնեն, ինչպիսի կոմրինայիաներ  
ել վոր Նրանք մտածեն, ազրեսորները միշտ նոր ավար կփնտան  
այն տիրապետություններում, վորոնց տերերը ցույց են տվել  
իրենց թուլացածությունը և իրենց անընդունակությունը՝ պաշտ-  
պանելու իրենց գիրքերը: Ներկայիս ազրեսորներին, շնորհիվ

նրանց ներքին թուլության և սևաբանների պակասության, ան-  
 հրաժեշտ են ռազմական արագ հաջողություններ, Նրանց ան-  
 հրաժեշտ են կարճ ամրաժողովուրդներ, թույլ պաշտպանված ան-  
 րիտարիաներ, իսկ մեզ մոտ նրանք չեն դանի վոչ մեկը, վոչ էլ  
 մյուսը: Անցկացնելով խաղաղության, ըստը անասկի պրոֆակա-  
 ցիաներից ազատ քաղաքականություն, շարունակելով մեր պաշտ-  
 պանունակության անդադար ամրացումը, զարգացնելով մեր  
 հաջողությունները անասական կյանքի բոլոր բնագավառնե-  
 րում, համախմբելով ավելի ու ավելի Միության բոլոր ժողո-  
 վուրդներին, նախարար և վնասկանորեն բնաջնջելով այսպես  
 կոչված հինդերբուրգ զորասյունը, այսինքն, թշնամական պետու-  
 թյունների լրանական և շնատարարական գործակալություննե-  
 րին, մենք այդ պետություններին կհիշեցնենք խորհրդային  
 յուրաքանչյուր թիզ հողի պաշտպանվածության, և ամուր պաշտ-  
 պանվածության մասին, և հենց դրանով նրանց ավելի հետու-  
 կանենք մեր սահմաններից: Սակայն, յեթե, հակառակ սպասու-  
 ծի, կատարվի ամենավատը և հակառակ մեր քաղաքականության  
 չհաջողվի խաղաղություն պահպանել, ապա մենք դիտենք, վոր  
 մեր պետության պաշտպանությունը զանվում և մեր պանծույթի  
 կարմիր Բանակի, կարմիր նավատորմի և կարմիր Ավիացիայի  
 ամուր, կարող ձեռքերում, վորոնց շուրջը կմխավորվի ամբողջ  
 խորհրդային ժողովուրդը մեր մեծ կուսակցության, մեր խնա-  
 սուն սուսնորդ, մեծ ստրատեզ և զորավար ընկեր Սաալինի զե-  
 կավարությամբ, մլասնական, անհաղթանարելի ձգտումով պաշտ-  
 պանելու մեր սոցիալիստական հայրենիքը, հաղթելու թեկուզ  
 ինչ էլ լինի և վոչնչացնելու թշնամուն ընդմիշտ:



Քարզմ. Ավ. Զոհարյան  
Մտրագիր Լ. Պապոյան  
Սրբազրիչ Լ. Մանվելյան  
Կանոնալ սրբազրիչ Ա. Տ.-Մկրտչյան

---

Նշումներ լիազոր Ձ 3311, հրատ. Ձ 608,  
Պատվեր Ձ 141, տիրամ 5000  
Հանձնված է արտադրության 27/VIII 1938 թ.  
Ստորագրված է ստորագրելու 14/IX 1938 թ.  
Գինը 40 կ.

---

Դեպքում — Գաղափարական հրատարակչության հրատարակչության տպարան,  
Յերևան, Ալավերդյան Ձ 55



ԳԱՍ Հիմնարար Փիտ. Գրադ.



220029781



4162 40 4.

A <sup>n</sup>  
A 29781

**М. М. ЛИТВИНОВ**

**К СОВРЕМЕННОМУ  
МЕЖДУНАРОДНОМУ ПОЛОЖЕНИЮ**

Аригиз—Издательство полит. литературы  
Ереван, 1938